

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԼԵՆԱ ԼԵՎՈՆԻ ՂԱԶԱՐՅԱՆ

**ԳՆԱՀԱՏՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒԺԳՆԱՅՄԱՆ
ԻՄԱՍՏԱԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ**

**Ժ.02.07 - «Գերմանական լեզուներ» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ - 2013

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ Բ.Գ.Պ., պրոֆեսոր Ե.Լ. Երզնկյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Բ.Գ.Պ., դոցենտ Շ.Հ. Պարոնյան
Բ.Գ.Թ., դոցենտ Ս.Ա. Չալարյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2013թ. հոկտեմբերի 18-ին, ժամը 14:30-ին ՀՀ ԲՈՂ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող 009 «Գերմանական լեզուներ» մասնագիտական խորհրդի նիստում (Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013թ. սեպտեմբերի 17-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար
Բ.Գ.Պ., պրոֆեսոր՝

Ե.Լ. Երզնկյան

Լեզվական հետազոտությունների ճանաչողական ուղղության շրջանակներում լեզվական տարբեր երևույթներ մեկնաբանվում են նորովի՝ հարստացնելով դրանք նոր իմաստներով ու նշանակություններով: Դա պայմանավորված է կարևորագույն և հիմնարար այն դրույթով, որ լեզուն դիտարկվում է ոչ թե որպես վերացական համակարգ, այլ որպես սուբյեկտի հաղորդակցական ու ճանաչողական գործունեության հիմք:

Պայմանավորված լինելով մարդու՝ աշխարհի վերաբերյալ ճանաչողական պատկերով՝ գնահատողականության կարգը շարունակում է լայնորեն ուսումնասիրվել ժամանակակից լեզվաբանական ուսումնասիրությունների գիտական հարացույցում: Արտահայտելով մարդու վերաբերմունքը շրջապատող իրականության նկատմամբ՝ գնահատողականությունը բնութագրվում է ուժգնացման հնարավորությամբ, քանի որ այն պայմանավորված է գնահատվող օբյեկտի հարաբերական արժեքով, և ըստ այդմ, գնահատողական վերաբերմունքը լեզվում կարող է աստիճանավորվել՝ կախված օբյեկտի արժեքների բնույթից ու սուբյեկտի արժեքային համակարգից: Ուժգնացնող բառերը մեծ դեր ունեն գնահատողական դատողությունների աստիճանավորման գործընթացում, քանի որ այս կարգը սերտորեն կապված է փիլիսոփայական այնպիսի կարգերի հետ, ինչպիսիք են քանակը, որակը, չափը:

Սույն ուսումնասիրության **առարկան** գնահատողականության ուժգնացման իմաստագործառական դրսևորումներն են խոսքում: Լեզվում գնահատողականությունը սերտորեն կապվում է եղանակավորման, հուզականության, արտահայտչականության հետ: Ուժգնացումը մուտք է գործում գնահատողական ասույթ, սաստկացնում կամ ապաստակացնում գնահատողականության կտրականությունը, ավելացնում նրա արտահայտչականությունն ու հուզականությունը:

Աշխատանքի **նպատակն** է ուսումնասիրել գնահատողական դատողություններում հանդես եկող ուժգնացման միջոցների իմաստային և գործառական առանձնահատկությունները՝ հիմք ընդունելով ուժգնացնող բառերի զարգացման իմաստային աղբյուր-դաշտերի հիման վրա առանձնացված տարաբնույթ ուժգնացնող բառերի առանձնահատկությունները: Ընդ որում, ելակետային է համարվում այն դրույթը, որ գնահատողական դատողություններում հանդես եկող ուժգնացնող բառերի դաշտը անընդհատ նորացվում է ու փոխարինվում նոր միավորներով, ինչն ապահովում

է նրանց արտահայտչականությունն ու հուզականությունը: Ըստ այդմ, աշխատանքում նաև փորձ է արվում վեր հանել լիիմաստ լեզվական միավորների ուժգնացնող բառերի վերածվելու իմաստային ու ճանաչողական մեխանիզմները: Սույն նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ **խնդիրները**

- համակողմանի քննության ենթարկել լեզվական գնահատողականության կարգին վերաբերող տեսական մոտեցումները, վեր հանել այս երևույթի ճանաչողական հիմքերը՝ արժևորելով դրանք սույն հետազոտության տեսանկյունից,
- որոշարկել գնահատողականության սահմանները լեզվում և նրա փոխհարաբերությունները հուզականության, արտահայտչականության և ուժգնացման կարգերի հետ,
- վեր հանել բառի նշանակության հուզագնահատողական իմակաների ձևավորման օրինաչափությունները, պարզել, թե ինչ տեղ է զբաղեցնում հուզական-գնահատողական նշանակությունը բառի իմաստային կառուցվածքում,
- ուսումնասիրել ուժգնացման իմաստագործառական կարգը որպես գնահատողականության աստիճանավորման միջոց, վեր հանել գնահատողականության ուժգնացման լեզվական միջոցները ժամանակակից անգլերենում,
- քննության առնել ուժգնացնող բառերի զարգացումն անգլերենում և դրանց հիմնական իմաստային աղբյուր-դաշտերն ու վեր հանել դրանց զարգացման հիմքում ընկած քերականացման ու իմաստային փոխակերպումների գործընթացները՝ հիմնվելով դրանց պատկանող միավորների իմաստային առանձնահատկությունների և գործածության հաճախականության վրա,
- վեր հանել ուժգնացնող բառերի իմաստագործառական առանձնահատկությունները խոսքում, ուժգնացնող բառերի փոխհարաբերությունները իրենց հետ հանդես եկող բառերի հետ, ինչպես նաև դրանց իմաստային փոխներթափանցումները:

Նշված խնդիրների լուծման նպատակով սույն ուսումնասիրությունը կատարվել է մի շարք **մեթոդների** համադրությամբ՝ նկարագրական, համատեքստային, ըստ իմաստային բաղադրիչների վերլուծության, ինչպես նաև կիրառվել են կորպուսային վերլուծության որոշակի տարրեր:

Թեմայի **արդիականությունը** պայմանավորված է ուժգնացնող բառերի համակարգային քննության, ինչպես նաև գնահատողական դատողություններում դրանց դերի ու գործառույթների համալիր քննության անհրաժեշտությամբ. ուժգնացնող բառերը կարևոր դեր են կատարում միջանձնային հաղորդակցության գործընթացում ընդհանրապես և գնահատողական ասույթի ձևակերպման մակարդակում մասնավորապես:

Աշխատանքի գիտական **նորույթը** բուն հարցադրման մեջ է. ուսումնասիրել գնահատողականության ուժգնացումը լեզվում: Խոսքային հաղորդակցման ոլորտում չափազանց կարևոր դեր կատարող այս երևույթը մինչ այժմ հանգամանորեն չի ուսումնասիրվել ժամանակակից ճանաչողական ու գործաբանական լեզվաբանական ուղղությունների լույսի ներքո: Ատենախոսության մեջ առաջին անգամ փորձ է արվում նաև քննության առնել ու սահմանել գնահատողական դատողություններում գործածվող ուժգնացնող բառերի աղբյուր-դաշտերից սերող միավորների իմաստային ու գործառական առանձնահատկությունները:

Ատենախոսության **տեսական** արժեքը պայմանավորված է այն հանգամանքով, որ ուժգնացման կարգը սույն աշխատանքում դիտվում է որպես ինքնուրույն իմաստագործառական կարգ: Այս մոտեցումը թույլ է տալիս հստակեցնել դրա սահմանները լեզվում և խոսքում: Ուսումնասիրության արդյունքները հնարավորություն են ընձեռում նորովի գնահատելու բառի իմաստային կառուցվածքում առկա և խոսքում առկայացող հուզագնահատողական և ուժգնացնող իմաստները: Դրանք որոշակի ներդրում են բառի նշանակության ընդհանուր տեսության զարգացման մեջ և կարող են նպաստել հուզագնահատողական բառապաշարի ոլորտում լեզվական վերաբերությանը նվիրված հետազա հետազոտությունների իրականացմանը:

Լեզվի ուժգնացման միջոցների ուսումնասիրության նոր մեթոդաբանության մշակումը իմաստային-աղբյուր դաշտերի սահմանման տեսանկյունից, ինչպես նաև այդ դաշտերին պատկանող միավորների իմաստագործառական և հաղորդակցական առանձնահատկությունների ուսումնասիրությունը որոշակի ներդրում են ժամանակակից ճանաչողական և գործաբանական ուղղություններում: Ուժգնացնող բառերի գործաբանական առանձնահատկությունների քննությունը որոշակի նպաստ է բերում նաև խոսքային ներազդման տեսությունների զարգացմանը,

ինչպես նաև մարդու ճանաչողական և ընկալողական գործունեությանը նվիրված հետազոտություններին:

Ատենախոսության արդյունքները կարող են **գործնական** կիրառություն գտնել այս ոլորտի հետագա ուսումնասիրություններում՝ նպաստելով որոշակի հարցադրումների պարզաբանմանը, կարող են ներկայացվել ճանաչողական լեզվաբանության, տեքստի վերլուծության, իմաստաբանության ու գործաբանության հիմնահարցերին նվիրված դասագրքերի համապատասխան բաժիններում, ինչպես նաև կիրառվել կուրսային ու ավարտական աշխատանքների իրականացման գործընթացում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ խոսակիցների փոխըմբռնումը պայմանավորված է նաև միջանձնային, հասարակական-հոգեբանական ու մշակութային բնութագրերով, իսկ գնահատողականության ու ուժգնացման կարգերը որպես գործաբանական ոլորտի միավորներ, մեծ կարևորություն ունեն հատկապես միջանձնային ու միջմշակութային հաղորդակցման տեսանկյունից, սույն աշխատանքի գործնական արժեքներից է նաև հաջող խոսքային փոխներգործության իրականացմանը նպաստելը:

Որպես հետազոտության **նյութ** օգտագործվել են BNC (British National Corpus) և COCA (Corpus of Contemporary American English) լեզվական կորպուսների կողմից տրամադրված լեզվական փաստերն ու գործածության հաճախականության տվյալները¹:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից՝ համապատասխան ենթագլուխներով և ուսումնասիրության հիմնահարցերը լուսաբանող ու լրացնող ծանոթագրություններով, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

¹ BNC կորպուսը պարունակում է մոտավորապես 100,000,000 բառ, որտեղ ընդգրկված են բառերի համատեքստային օրինակներ բոլոր գործառական ոճերից, իսկ COCA-ն բաղկացած է 425,000,000 բառից՝ նույնպես դասակարգված ըստ ժանրերի: Այս կորպուսները պարբերաբար թարմացվում են, այդ իսկ պատճառով դրանց օգնությամբ կատարված ուսումնասիրությունները առավել հիմնավորված ու թարմ տեղեկատվություն են տրամադրում տարբեր միավորների համատեքստային գործածության առանձնահատկությունների ու միտումների վերաբերյալ:

Ներածության մեջ ներկայացվում են աշխատանքի թեման, արդիականությունն ու նորույթը, ուսումնասիրության նպատակն ու առաջ քաշված խնդիրները, ինչպես նաև տեսական ու գործնական արժեքն ու մեթոդաբանական հիմնական ուղղվածությունը:

Առաջին գլուխը («Գնահատողականության սահմանները լեզվական իմացության հարացույցում») բաղկացած է չորս ենթագլխից: Առաջին ենթագլուխը («Գնահատողականության ճանաչողական հիմքերը. Արժեքների տեսություն») ուսումնասիրում է գնահատողականության կարգը՝ պայմանավորված մարդու՝ աշխարհի նկատմամբ ունեցած ճանաչողական պատկերով: Այս կարգը լեզվաբանության ոլորտ է թափանցել փիլիսոփայությունից և սերտորեն կապված լինելով փիլիսոփայության մեջ հայտնի արժեքների տեսության հետ՝ առանցքային դերակատարություն ունի մարդու ճանաչողական գործունեության մեջ և սահմանում է մարդու և շրջապատող աշխարհի փոխհարաբերությունների առանձնահատկությունները: Փիլիսոփայության մեջ արժեքների տեսությունը ներկայացված է Արիստոտելի, Պլատոնի, Գ.Ռիկկերտի, Ն.Հարտմանի, Մ.Հայդեգերի, Մ.Բախտինի, Ջ.Դյուրիի, Ռ.Պերիի և մի շարք այլ փիլիսոփաների աշխատություններում²:

Արժեք հասկացությունը ցույց է տալիս, թե ինչ փոխհարաբերություններ ունի արժեքը իրականության հետ՝ վերհանելով արժեքների համակարգի վրա ազդող օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները: Ցանկացած առարկայի գնահատողականությունը պայմանավորված է նրա դիրքով որևէ արժեքային համակարգում: Անհատի կողմից արված գնահատողական դատողությունները իրենց մեջ ամփոփում են աշխարհի մասին

² St' u Аристотель. Метафизика. Сочинения в четырех томах. АН СССР, Ин-т философии, т.4. М.: Мысль, 1983; Платон. Государство. Сочинения в трех томах, т.3. М.: Мысль, 1971; Риккерт Г. Науки о природе и науки о культуре. СПб., 1911; Гартман Н. Этика. СПб.: Владимир Даль, 2002; Хайдеггер М. Феноменология и трансцендентальная философии ценности. Киев: Изд-во "Cartel", 1996; Бахтин М.М. Собрание сочинений в 7 томах, т.1. Философская эстетика 1920-х годов. М.: Языки славянской культуры, 2003; Dewey J. Theory of Valuation. Chicago, 1939; Perry R. General Theory of Value. Harvard: Harvard University Press, 1954.

մեր գիտելիքների բարդ համակարգը. դա և օբյեկտիվ իրականության առարկաների ու նրանց հատկանիշների իմացությունն է, և անհատի արժեքային առանձնահատկությունները, որոնք կարող են արտահայտվել այլ առարկաների հետ զանազան հարաբերություններում, և տարբեր նորմերի, ինչպես նաև հանրային գիտակցության մեջ ամփոփված գնահատողական կարծրատիպերի ու նրանց հատկանիշների իմացությունը:

Առաջին գլխի երկրորդ ենթագլխում («Գնահատողականության սահմանները լեզվում և նրա փոխհարաբերությունները հուզականության, արտահայտչականության և ուժգնացման կարգերի հետ») քննության է առնվում գնահատողականության կապը հարակից, այսպես կոչված սուբյեկտիվ կարգերի հետ: Գնահատողականության լեզվական կարգը այս կարգերի հետ գտնվում է բարդ ու բազմաբնույթ փոխհարաբերությունների մեջ: Դիտարկելով հուզականություն-գնահատողականություն կարգերի փոխհարաբերությունը՝ տեսնում ենք, որ հուզականությունն ունի սուբյեկտիվ գնահատողական հիմքեր, այսինքն՝ առաջ է գալիս գնահատողական մեխանիզմների գործունեության արդյունքում, մյուս կողմից հուզականությունն ինքը կարող է հիմք ծառայել գնահատողականության առաջացման համար: Այս առումով նրանք կապված են միմյանց հետ պատճառահետևանքային կապերով: Արտահայտչականությունն իր հերթին թույլ է տալիս, որ ցանկացած լեզվական միավոր արտահայտի խոսողի սուբյեկտիվ վերաբերմունքը, այն, ի տարբերություն հուզականության, լինելով նպատակաուղղված, որոշակի արտահայտչամիջոցների օգնությամբ ծառայում է խոսքի պատկերավորմանը և նպատակ ունի ուժեղացնել հուզական ներգործությունը խոսակցի վրա: Արտահայտչականությունը նաև աստիճանավորվում է, ընդ որում, աստիճանավորման չափը որոշվում է ուժգնացման լեզվական կարգի միջոցով: Իսկ արտահայտչականության ուժգնացումն էլ ծառայում է ողջ գնահատողական դատողության ուժգնացմանը՝ լինի դա գնահատողական սանդղակով վեր, թե վար:

Առաջին գլխի երրորդ ենթագլուխը («Լեզվական գնահատողականության կառուցվածքը և տեսակները») քննության է առնում գնահատողականության բազմաբաղադրիչ կառուցվածքը, ինչպես նաև գնահատողականության տարբեր դասակարգումներ՝ հիմնված տարբեր չափանիշների վրա:

Գնահատողական դատողությունը ենթադրում է որոշակի հարաբերության սահմանում գնահատողականության սուբյեկտի և օբյեկտի միջև: Գնահատողական դատողությունը միշտ վերագրվում է կոնկրետ անձի, խմբի կամ հասարակության՝ որպես ամբողջության, այսինքն՝ գնահատողականությունը հարաբերական է: Ա. Իվինը նշում է, որ հարաբերականությունը դրսևորվում է նրանով, որ «մեկ անձի համար որպես լավ գնահատվողը, մյուսի համար կարող է լավը չլինել, և հետևաբար պետք է միշտ նշել, թե հենց ում կողմից է տվյալ առարկան կան երևույթը գնահատվում լավ, այսինքն՝ այն դարձնել հարաբերական՝ մատնանշելով գնահատողին»³: Այս առումով կարևորվում է գնահատողականության սուբյեկտի դերը գնահատողական դատողություններում: Գնահատողականության հիմնական բաղադրիչներ սուբյեկտն ու օբյեկտը իրար հետ կապվում են գնահատողական ստորոգումով: Վերջինս կարող է արտահայտվել տարբեր ձևերով՝ ինչպես առանձին բառերով, այնպես էլ ողջ ասույթի իմաստային ամբողջությամբ: Գնահատողական դատողությունը բացի վերը նշված բաղադրիչներից կարող է ներառել նաև ոչ պարտադիր բաղադրիչներ, որոնցից մեզ համար առանձնահատուկ նշանակություն ունեն գնահատողականության ուժգնացման միջոցները

Առաջին գլխի չորրորդ ենթագլուխը («Գնահատողականության տեղը բառի իմաստային կառուցվածքում») նվիրված է գնահատողական իմաստի ուսումնասիրությանը բառի իմաստային կառուցվածքում: Գնահատողականության արտահայտման լեզվական միջոցների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանց իմաստային կառուցվածքում առկա են գնահատողական իմակներ, ինչպես օրինակ՝ գնահատողական բայերը, որոնց վրա էլ կառուցվում է գնահատողական դատողությունը: Այս բառերը բացի հիմնանշանակային /դենոտատիվ/ հատկանիշներից ներառում են նաև բաղադրիչներ, որոնք արտահայտում են հուզագնահատողական վերաբերմունք հիմնանշանակային բաղադրիչների նկատմամբ: Այս հուզագնահատողական իմակները հիմնված են բառի հիմնանշանակային իմաստի վրա կամ բխում են դրանից, սակայն դրանք ոչ միշտ են փոխա-

³ Ивин А.А. Основания логики оценок. М.: Изд-во Моск. ун-та, 1970, с. 21.

րինում հիմնանշանակային իմաստը, այլ շատ դեպքերում համատեքստում առկայանում են միաժամանակ:

Աշխատանքի երկրորդ գլուխը («Ուժգնացումը որպես գնահատողականության աստիճանավորման միջոց») ևս բաղկացած է չորս ենթագլխից: Առաջին ենթագլուխը («Ուժգնացումը որպես լեզվական երևույթ») անդրադառնում է ուժգնացման կարգի սահմանմանը լեզվում: Լեզվաբանության մեջ «ուժգնացում» եզրույթը կիրառվում է լայնորեն, սակայն դրա սահմանումները բազմազան են, հաճախ նույնիսկ հակասական: Սույն ուսումնասիրության համար ելակետային է ուժգնացման կարգի դիտարկումը լայն ըմբռնմամբ, ըստ որի ուժգնացնող միջոցներ եզրույթը վերաբերում է լեզվում ուժգնացմանը նպաստող բոլոր միավորներին, որոնք ցույց են տալիս աստիճանավորում ուժգնացման սադրակով թե՛ դեպի վեր, թե՛ դեպի վար:

Երկրորդ գլխի երկրորդ ենթագլուխը («Ուժգնացնող բառերի զարգացումն անգլերենում. իմաստային աղբյուր-դաշտերն ու քերականացման գործընթացները») քննության է առնում ուժգնացնող բառերի զարգացման առանձնահատկություններն անգլերենում քերականացման գործընթացների լույսի ներքո: Ուժգնացնող բառերը շարունակաբար զարգանում են քերականացման գործընթացների ազդեցությամբ և խոսողի՝ իր ասածին շեշտադրում հաղորդելու ցանկության շնորհիվ: Ուսումնասիրության մեջ քերականացման գործընթացը դիտարկում ենք որպես իմաստային փոխակերպումների գործընթաց՝ քննարկելով լի-իմաստ լեզվական միավորների ուժգնացնող բառերի վերածվելու մեխանիզմները: Արդյունքում առանձնացվել են ուժգնացնող բառերի իմաստային աղբյուր-դաշտերի որոշակի խմբեր (*արտաքին տեսք, նկարագրություն և արտահայտող բառեր՝ pretty, beautiful(ly), young, քանակ չափայնություն և բացարձակ հասկություններ՝ extremely, completely, highly, վերաբերմունք, արձագանք, գնահատողականություն՝ bad(ly), dreadful(ly), surprising(ly), տարբու բառեր՝ damn, bloody* և այլն), որոնց կազմում ներառված լեզվական միավորները դեռևս լեզվում կարող են գործածվել իրենց նախնական բառային իմաստներով, և շատ դեպքերում նրանց բառային և ուժգնացնող-քերականական իմաստները համագոյակցում են բառի իմաստային կառուցվածքում: Առանձնացված աղբյուր-դաշտերի հիման վրա սահմանվել են ուժգնացնող բառերի երեք տեսակներ, որոնք առավել

հաճախ են հանդես գալիս գնահատողականություն արտահայտող ասույթներում՝ աստիճանավորելով խոսողի արտահայտած գնահատողական վերաբերմունքը: Դրանք են տրամաբանական-աստղական, գնահատողական-աստղական և հուզասաստկական բառերը:

Տրամաբանական-աստղական բառերը պատկանում են «Քանակ, չափայնություն և բացարձակ հատկություններ» արտահայտող աղբյուր-դաշտին: Այս ուժգնացնող բառերը հիմնականում արտահայտում են շրջապատող աշխարհի առարկաների և երևույթների քանակ, չափ, մեծություն, տևողություն և նմանատիպ այլ հասկացություններ, օրինակ՝ *absolutely wonderful, colossal advantage, inexhaustible patience, highly successful* և այլն: Այս ուժգնացնող բառերը տրամաբանական-աստղական բառերի խմբում են, քանի որ դրանց հիմքում ընկած հասկացությունները ներկայացնում են օբյեկտիվ, տրամաբանական հատկանիշներ:

Գնահատողական-աստղական բառերը պատկանում են «Արտաքին տեսք, նկարագրություն» և «Վերաբերմունք, արձագանք, գնահատողականություն» արտահայտող աղբյուր-դաշտերին: Մրանք թերևս կազմում են ուժգնացնող բառերի գերակշիռ մեծամասնությունը և կոչվում են գնահատողական-աստղական՝ արտահայտելով վախ, անվստահություն, հիացմունք, զարմանք, ափսոսանք և այլն: Օրինակ՝ *astorishingly dull, awfully interesting, surprisingly beautiful, incredibly important, surprising rapidity, appallingly rough, wretchedly ill* և այլն:

Հուզասաստկական բառերը պատկանում են տաբու բառերի աղբյուր-դաշտին: Այս բառերը հիմնականում սերում են տաբու բառերից, անեծքներից, լեզվի ոչ ստանդարտ բառապաշարից: Ժամանակի ընթացքում կորցնելով իրենց բուն բառային իմաստը՝ դրանք պահպանում են վառ դրսևորվող հուզարտահայտչական երանգավորումը: Օրինակ՝ *damn, bloody, hell, flipping, crapping, effing* և այլն:

Երկրորդ գլխի երրորդ ենթագլխում («Ուժգնացնող բառերի կապակցելիության առանձնահատկությունները ժամանակակից անզերենում») քննության են առնվում ուժգնացնող բառերի կապակցելիության հնարավորությունները: Կատարված ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ուժգնացնող բառերը կազմում են տարբեր կապակցություններ, և դրանց կապակցելիության հնարավորությունները մեծապես պայմանավորված են կապակցվող միավորների ներկա իմաստային առանձնահատկությու-

յուններով, ինչպես նաև քերականացման աստիճանով. որքան քերականացված է ուժգնացնող բառը, այնքան լայն են նրա կապակցելիության հնարավորություններն ու գործածության հաճախականությունը: Մյուս կողմից՝ սահմանափակվում են ուժգնացնող բառի՝ նախադասության տարբեր դիրքերում հանդես գալու հնարավորությունները: Օրինակ՝ *truly* բառը նախադասության մեջ գործնականում կարող է հանդես գալ ցանկացած դիրքում, սակայն նրա սաստկական առնշանակությունը առավել վառ է արտահայտվում նախադաս որոշչային դիրքում: Օրինակ՝

Truly, he is a foolish person.

He **truly** is a foolish person.

He is **truly** a foolish person.

He is a **truly foolish** person.

He is a foolish person, **truly**.

Երկրորդ գլխի չորրորդ ենթագլուխը («Գնահատողականության ուժգնացման աստիճանավորումը. ուժգնացման սանդղակ») ներկայացնում է ուժգնացման կարգի կենտրոնական հասկացությունը՝ ուժգնության աստիճանավորման սանդղակը, որի երկայնքով դասավորված են ուժգնացնող բառերի տարբեր դասերը՝ ըստ աստիճանավորող ներհատուկ իմաստային հատկությունների: Աստիճանավորման սանդղակի չափման միավոր է համարվում ուժգնացման սանդղակով վեր կամ վար կատարված ցանկացած քայլ: Քայլ ասելով հասկանում ենք լեզվական արտահայտման ցանկացած ձև, որը տարբերվում է իրեն հակադրվող ձևից: Հարկ է նշել, որ ուժգնության սանդղակը գոյություն ունի և՛ խոսողի, և՛ լսողի գիտակցության մեջ: Լեզվում հատկանիշի աստիճանավորումը բնութագրող միջոցների բազմազանությունը խոսողին հնարավորություն է ընձեռում նշվող հատկանիշը տեղափոխելու սանդղակի մի բաժանումից մյուսը, նորմայից դեպի սահմանային բևեռներ:

Աշխատանքի երրորդ գլուխը («Գնահատողականությունը ուժգնացնող լեզվական միջոցների իմաստագործառական դրսևորումները») բաղկացած է երեք ենթագլխից: Առաջին ենթագլուխը («Գնահատողական դատողությունների հիմնական տեսակներն ու նրանց ուժգնացման լեզվական առանձնահատկությունները») անդրադառնում է գնահատողական բաղադրիչ ունեցող կառույցների քննությանը: Գնահատողականությունը համարվում է եղանակավորման տեսակներից մեկը: Հետևաբար

գնահատողական դատողությունների մասին խոսելիս հարկ է նշել տրամաբանության մեջ ավանդաբար առանձնացվող եղանակավորման արտահայտման երկու հիմնական տեսակների մասին՝ *de dicto* եղանակավորում /It's necessary that P, It's good that P/ և *de re* եղանակավորում /X necessarily possesses the qualities Y, X is good/: *De dicto*-ի կառույցում եղանակավորումը վերագրվում է նախադասությանը, մինչդեռ *de re*-ի կառույցում եղանակավորման միջոցով առարկային վերագրվում է որոշակի հատկանիշ: *De dicto* եղանակավորման մեջ գնահատողականությունը ձևավորվում է մոդուս-դիկտում կառույցով: Գնահատողական մոդուսները արտահայտվում են մակբայներով, ածականներով (*It's good that you understand me.*), բայերով (*I regret he didn't come.*), եղանակավորող արտահայտություններով (*It's a pity I don't know.*) և այլն: Մոդուս-դիկտում գնահատողական կառույցն ունի մի քանի առանձնահատկություններ, որոնք արտահայտում են արժեքանական եղանակավորում, այսինքն՝ խոսողի վերաբերմունքը՝ հիմնված արժեքային պատկերացումների վրա: Ցանկացած տեսակի գնահատողական մոդուսների դեպքում նրանց բնույթը (դրական կամ բացասական) փոխանցվում է դիկտումին: Այսպես օրինակ՝ *It is not really laudable* that Henry's councillors were all uniformly evil. Nor does it make sense that the king was completely absent (COCA): Տվյալ օրինակում *It is not really laudable* կառույցի միջոցով խոսողի բացասական գնահատողականությունը փոխանցվում է ողջ դիկտումին:

Գնահատողական կառույցների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գնահատողական դատողություններում ուժգնացման երևույթի ուսումնասիրության մեջ էապես կարևորվում են սաստկացնող կամ ապաստակացնող հուզագնահատողական բաղադրիչ ունեցող լեզվական միավորները, որոնք սահմանում են գնահատողական հատկանիշի որակական և քանակական բնութագիրը և ունեն սուբյեկտիվ բնույթ:

Երբորդ գլխի երկրորդ ենթագլուխը («Լեզվական տարբեր մակարդակների ուժգնացնող միջոցների առկայացումը գնահատողական դատողություններում») անդրադառնում է տարբեր մակարդակների ուժգնացնող միջոցների դրսևորման առանձնահատկություններին գնահատողական դատողություններում:

⁴Целищев В.В. Понятие объекта в модальной логике. Новосибирск: Наука, 1978.

Բառային կամ ներասույթային մակարդակում ուժգնացման կարգի արտահայտման միջոցները բազմաթիվ են ու բազմազան: Ուժգնացման բառային միջոցները լեզվում հիմնականում կապակցվում են աստիճանավորվող լեզվական միավորների հետ: Գնահատողական դատողություններում ուժգնացնող բառը գտնվում է նախադաս դիրքում, այսինքն՝ սովորաբար նախորդում է գնահատողականություն արտահայտող լեզվական միավորին: Լեզվի ներասույթային մակարդակում ամենահաճախ գործածվող և ամենավառ արտահայտված ուժգնացնող միավորները ուժգնացնող բառերն են՝ սաստկական ու ապաստակական ածականներն ու մակբայները, որոնք խոսքում՝ մասնավորապես գնահատողական դատողություններում ունեն գրեթե անսահմանափակ արտահայտչականություն՝ խոսացնելով խոսողի վերաբերմունքը այս կամ այն առարկայի կամ երևույթի նկատմամբ: Օրինակ՝

It's in very good order, **awfully pretty** and **convenient**. (BNC)

It's **incredibly awful**. It got me a little worried. I hate to think of something happening to you. (COCA)

Բառային մակարդակում հանդես եկող ուժգնացնող բառերը կարող են լինել նաև գոյականներ: Այդպիսի բառերից են՝ *a bit, a good deal, plenty, oceans, a quantity, a world* և այլն: Օրինակ՝

There's **a world of** difference between those kinds of questions. (COCA)

“I've crossed **oceans of** time to find you.” (BNC)

Կարելի է նկատել, որ բերված օրինակներում սաստկական առնչականությունը դրսևորվում է փոխաբերական վերաիմաստավորման շնորհիվ:

Բառային մակարդակում հանդես եկող հատկանիշի ուժգնացման հետաքրքիր օրինակ են նաև ածականների ու բայերի հոմանշային խմբերը, որտեղ ուժգնացումը տեղի է ունենում ոչ թե բացահայտ, այլ ներակա կերպով: Օրինակ՝ *big-enormous-huge-gigantic-colossal, bad-disagreeable-horrible, to like-to love-to adore*: Այս հոմանշային շարքերը միավորված են մեկ ընդհանուր նշանակությամբ, սակայն նրանցից յուրաքանչյուրն ուժգնության սանդղակի վրա գրավում է նախորդից մեկ աստիճանով բարձր դիրք՝ իր ինտենսեմային համապատասխան, այսինքն՝ այս շարքերի բառերից յուրաքանչյուրն իր իմաստային կառուցվածքում ունի առնվազն երկու իմակ՝ մեկ հիմնական և մեկ սաստկական:

Ներասույթային մակարդակում ուժգնացումը կարող է արտահայտվել նաև կայուն արտահայտությունների կազմում՝ հիմնականում համեմատական կառույցների տեսքով: Օրինակ՝ *as blind as a bat, as mild as mother's milk, as clear as a day, as cold as ice* և այլն:

Ասույթային մակարդակում ուժգնացման առավել հաճախ հանդիպող ու գործածվող միջոցներից են կրկնությունը, բացականչական նախադասությունները, երկանդամ անդեմ նախադասությունները, ինչպես նաև բաղդատական բարդ ստորադասական նախադասությունները:

Կրկնությունը ասույթային մակարդակում ուժգնացման առավել տարածված միջոցներից է: Գնահատողական դատողության մեջ լեզվական այս կամ այն միավորի կրկնությունը գրավում է խոսակցի ուշադրությունը, առավել ընդգծում խոսողի կողմից արտահայտված հուզազնահատողական վերաբերմունքը առարկայի կամ երևույթի նկատմամբ, ուժգնացնում է խոսքի հուզական ազդեցությունը: Օրինակ՝

I wish she'd come back. **I wish, I wish, I wish.** (COCA)

It was non-stop and a **terrible, terrible** strain for him. The emotional pressure was just tremendous. (BNC)

We **laughed** and **laughed** and **laughed.** (BNC)

“Sorry,” that’s what the man said. And his accent was **so** wonderful, **so** perfect for the story. (COCA)

Ինչպես երևում է վերը նշված օրինակներից, կրկնվում են լեզվական նույն միավորները, սակայն կրկնություն կարող է համարվել նաև համանման իմաստային բովանդակություն ունեցող բառերի շարույթը: Այս դեպքում կրկնվում է ոչ թե բառային միավորը, այլ իրար հաջորդող լեզվական միավորների ընդհանրական իմաստային բովանդակությունը: Օրինակ՝

It was a **deplorable, disgraceful, despicable** act. (BNC)

This **disquieted** me, this **startled** me, this **frightened** me, this **terrified** me. (BNC)

Ասույթային մակարդակում հաճախակի գործածվող ուժգնացման շարահյուսական միջոցներից են նաև բացականչական նախադասությունները, որոնք ժամանակակից անգլերենում հիմնականում սկսվում են *what* և *how* հարաբերական դերանուններով, սակայն ուժգնացնող գործառույթ կարող են կատարել նաև դրանց հաջորդող բառերը (տվյալ

դեպքում՝ *remarkably, wonderful, beastly*) իրենց իմաստային առանձնահատկությունների շնորհիվ: Օրինակ՝

What a remarkably durable player he was for the first half of his career. (COCA)

I haven't seen you for ages! **How wonderful** you look. (COCA)

How beastly you are, Joanna! (BNC)

Երրորդ գլխի երրորդ ենթագլխում («Ուժգնացնող բառերի իմաստագործառական առանձնահատկությունները գնահատողականության համատեքստում») քննության են առնվում աշխատանքում սահմանված ուժգնացնող բառերի երեք տեսակները իմաստագործառական առանձնահատկությունների տեսանկյունից: Ընդ որում, շեշտը դրվում է հաճախ գործածվող այն միավորների վրա, որոնցում զարգացման հետաքրքիր միտումներ են դրսևորվում:

«Քանակ, չափայնություն և բացարձակ հատկություններ» արտահայտող աղբյուր-դաշտից սերող և գնահատողական դատողություններում թերևս ամենահաճախակի գործածվող տրամաբանական-ասաստկական բառը *completely* բառն է: Բառի բառարանային բացատրությունները ցույց են տալիս, որ ժամանակակից անգլերենում *completely* բառը հանդես է գալիս որպես ուժգնացնող բառ քերականացման բարձր աստիճանի և կապակցելիության մեծ ներուժի շնորհիվ:

Հարկ է նշել, որ տրամաբանական-ասաստկական այս ուժգնացնող բառը գլխավորապես կապակցվում է բացասական առնշանակություն ունեցող ածականների հետ, որոնք չունեն սուբյեկտիվ երանգավորում: Օրինակ՝

Two men **ignored me completely**. One woman shook her head. (COCA)

I enjoyed your article on George Marshall, but I **completely disagree** with your conclusion. (COCA)

Եթե ածականական կապակցություններում *completely* բառը մշտապես նախադաս դիրք է զբաղեցնում, ապա բայական կապակցություններում այն կարող է գործածվել թե՛ նախադաս. թե՛ հետադաս դիրքերում:

«Արտաքին տեսք, նկարագրություն» և «Վերաբերմունք, արձագանք, գնահատողականություն» արտահայտող աղբյուր-դաշտերից սերող և գնահատողական դատողություններում հաճախակի գործածվող գնահատողական-ասաստկական բառերից է *really*-ն: Ըստ Օքսֆորդի

ստուգաբանական բառարանի՝ այն որպես ուժգնացնող բառ անգլերենում սկսվել է գործածվել 1600-ական թվականներից⁵:

Այս բառի բառարանային բացատրության մեջ սաստկացնող իմաստին գուգահեռ նշվում են նաև եղանակավորող բառիմաստներ: *Really* բառը թերևս ամենահաճախ գործածվող ուժգնացնող բառն է ժամանակակից անգլերենում: Այդ մասին է վկայում այն փաստը, որ չնայած այն հանգամանքին, որ այս բառն իր բուն բառային իմաստում դեռևս պահպանում է իր նախնական եղանակավորող իմաստը, սակայն այն ավելի ու ավելի հաճախ է սկսել գործածվել միայն իր սաստկական նշանակությամբ: Ավելին, վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ *really* բառը հավասարապես գործածվում է ն՝ դրական, ն՝ բացասական հատկանիշներ արտահայտող ածականների հետ, ինչը խոսում է դրա քերականացման բավականին բարձր աստիճանի մասին: Հատկանշական է նաև այն փաստը, որ *really* բառի քերականացման և բուն բառարանային իմաստի կորստի գործընթացը շարունակվում է: Դեռևս մի քանի տասնամյակ առաջ Բոլինջերը այս միավորը համարում էր ավելի քիչ քերականացված ինտենսիֆիկատոր⁶:

Գնահատողական-սաստկական բառերի զարգացման գործընթացի քննության համատեքստում հետաքրքիր օրինակ է *warmly* բառի իմաստագործառական առանձնահատկությունների ուսումնասիրությունը: Այս բառը չունի բառարաններում արտահայտված ու ամրագրված սաստկական կիրառություն, սակայն դրա կիրառության ու կապակցելիության առանձնահատկությունները խոսում են այս բառի՝ ուժգնացնող բառի վերածման միտումների մասին:

BNC և COCA կորպուսային համակարգերի տրամադրած օրինակների վերլուծությունը ցույց է տալիս, որ *warmly* բառը կապակցվում է գլխավորապես բայերի հետ՝ հանդես գալով որպես ձևի մակբայ իր երկու հիմնական իմաստներով. նախ իր առաջնային իմաստով՝ կապված ջերմ-աստիճանի հետ և ապա՝ փոխաբերական իմաստով՝ կապված սիրալիրության, ջերմության, ընկերասիրության հետ: Օրինակ՝

⁵ Oxford Dictionary of English Etymology. Oxford: Oxford University Press, 1995.

⁶ Bolinger D. Degree Words. The Hague/Paris: Mouton, 1972, p. 32.

I'll call back at two thirty. I hope you're **dressed warmly**. (COCA)

They **welcomed** me **warmly**. That night, as there was no building big enough for me, I slept on the ground, covered by my blanket. (BNC)

Վերը նշված օրինակներում նույնպես արտացոլված է *warmly* բառի մակբայական կիրառությունը բուն բառային իմաստով՝ առանց որևէ սաստկական առնշանակության: Մակայն մեր կարծիքով *warm* ածականը, ինչպես նաև նրանից սերող *warmly* մակբայը որոշ սահմանափակ թվով կապակցություններում հանդես են գալիս հենց աստիճանավորող նշանակությամբ, և չի բացառվում, որ ժամանակի ընթացքում վերը նշված գործընթացների արդյունքում կարող են վերածվել սաստկական նշանակություն ունեցող բառերի, ինչը կամրագրվի նաև նրանց բառարանային բացատրության մեջ:

Հարկ է նշել, որ որոշ դեպքերում հատկանիշի նկարագրությունը (in a friendly manner) սերտորեն կապված է աստիճանավորվող երևույթի կամ գործողության դրսևորման հարաբերականորեն բարձր քանակի կամ աստիճանի հետ: Օրինակ՝ *applaud warmly* արտահայտության մեջ *warmly* մակբայը նախ կվերաբերի ծափահարությունների տևողությանը, բարձր լինելու աստիճանին, ապա նաև ջերմությանն ու շարունակականությանը: Այսպիսով, կարող ենք ասել, որ *applaud warmly* կապակցության մեջ միաժամանակ կարող են առկայանալ բառի և՛ քանակական/ սաստկական, և՛ որակական/գնահատողական իմակները՝ կախված համատեքստային առանձնահատկություններից: Օրինակ՝

The motion was proposed by Mrs Lemass, who reported on her committee's deliberations. Her speech was **warmly applauded** by a full chamber. (BNC)

Աստիճանավորող իմակների համագոյակցումը հատկանիշ արտահայտող գնահատողական-նկարագրական իմակների հետ վառ կերպով արտահայտվում է բառախաղի միջոցով: Խոսողը կարող է համակցել դրանք՝ որոշակի ոճական երանգավորում արտահայտելու նպատակով: Օրինակ՝

This photograph pleased me in two ways, once **warmly** for love, once in a hot mean way. (BNC)

She was **warmly human** and chillingly disturbing. (BNC)

Սակայն որոշ կիրառություններում *warmly*-ն հանդես է գալիս զուտ որպես աստիճանավորող մակբայ, այսինքն՝ ուժգնացնող բառ: Օրինակ՝

Comedian Kenny Everett is **warmly** endorsing a Tory party rally. (BNC)

I'd recommend it **warmly** to all teenagers. (BNC)

This voucher will be **warmly** accepted as payment. (BNC)

Christine Botes is a **warmly vulnerable** Charlotte. (BNC)

Այս օրինակներում *warmly* բառը հանդես է գալիս ‘strongly, intensively’ նշանակությամբ՝ ուժգնացման սանդղակի վրա գրավելով միջին դիրք: Համոզվելու համար, որ *warmly* բառն այստեղ աստիճանավորող մակբայ է, այլ ոչ թե ձևի մակբայ, կիրառել ենք Բեքլունդի կողմից առաջարկված թեստը⁷: Ըստ այդ թեստի՝ եթե նախադասությունը կարող է վերաձևակերպվել այնպես, որ մակբայը փոխարինվի համապատասխան ածականով, ապա տվյալ մակբայը ձևի մակբայ է, այլ ոչ թե աստիճանավորող:

Ուժգնացնող բառերի հաջորդ խումբը տաբու բառերից սերող հուզասաստկական բառերն են: Ժամանակակից անգլերենում որպես հուզասաստկական բառեր գործածվող տաբու բառերը դեռևս չեն համարվում լիովին զրկված իրենց բուն բառարանային իմաստից և հետևաբար չեն կարող համարվել չեզոք՝ զուրկ հուզարտահայտչական երանգավորումից: Տաբու բառերից զարգացած ուժգնացնող բառերը արտահայտում են խոսողի հուզագնահատողական վերաբերմունքը, նրանց իմաստային կառուցվածքում հուզական բաղադրիչը շատ ավելի վառ է արտահայտված: Օրինակ՝ հետևյալ ասույթներում խոսողը նախընտրում է գործածել *bloody* բառը առավել չեզոք, սակայն ուժգնացման սանդղակում գրեթե նույն դիրքը գրավող *very* կամ *completely* բառերի փոխարեն:

“**Bloody** idiot,” said Will, snickering at the double meaning. (COCA)

Stupid, **bloody fool**. He had to do something to turn the tide. (COCA)

⁷ Sté u Bäcklund U. The Collocation of Adverbs of Degree in English. Uppsala: Studia Anglistika Upsaliensia, 1973, p. 13.

Այս ասույթներում *bloody* բառը պարզապես չի նշում, որ խոսողը ինչ-որ մեկին համարում է շատ հիմար, այլ արտահայտում է խոսողի գայրույթն ու հիասթափությունը:

Միննույն ժամանակ հարկ է նաև նշել, որ չնայած *bloody* բառն ունի հստակորեն արտահայտված հուզագնահատողական երանգավորում, այն ունի կապակցելիության ավելի լայն հնարավորություններ, քանի որ անցել է քերականացման ավելի երկար ճանապարհ նույն աղբյուր-դաշտում առկա տաբու բառերից սերված մյուս բառերի (*damn, darn, filthy*) համեմատությամբ:

Այսպիսով, բերված վերլուծությունները փաստում են, որ ուժգնացման կարգի միավորները լեզվում պատկանում են ամենաարագ փոփոխվող ու զարգացող միավորների դասին: Ուժգնացնող բառերի առաջացումը ցույց է տալիս, որ լեզվի զարգացման ընթացքում բառապաշարի մի զգալի շերտ ենթարկվում է «նորացման»: Այլ կերպ՝ լեզվի հին և նոր շերտերը ժամանակի ընթացքում ի հայտ են բերում նոր ուժգնացնող նշանակություն:

Եզրակացության մեջ ամփոփվում են աշխատանքի հիմնական արդյունքները:

- Գնահատողականության լեզվական կարգը բարդ ու բազմաբնույթ փոխհարաբերությունների մեջ է գտնվում հուզականության, արտահայտչականության և ուժգնացման հարակից կարգերի հետ: Հուզականությունն ու գնահատողականությունը կապված են պատճառահետևանքային կապերով՝ փոխադարձաբար պայմանավորելով միմյանց: Արտահայտչականությունը թույլ է տալիս, որ ցանկացած լեզվական միավոր արտահայտի խոսողի սուբյեկտիվ վերաբերմունքը որոշակի արտահայտչամիջոցների օգնությամբ՝ ուժգնացնելով հուզական ներգործությունը խոսակցի վրա:
- Հուզական-գնահատողական նշանակությունը բառի իմաստային կառուցվածքի բաղադրիչ է, ներկայացնում է բառի գործաբանական-հաղորդակցական կողմը և առկայանում պարզագույն գնահատողական դատողություններում:

- Գնահատողականությունը լեզվում աստիճանավորվում է ուժգնացման կարգի միջոցով, որի յուրաքանչյուր դրսևորում գնահատողական դատողության մեջ իր հաղորդակցական-գործաբանական դերն է կատարում՝ աստիճանավորելով խոսողի սուբյեկտիվ վերաբերմունքը:
- Որպես իմաստագործառական կարգ՝ ուժգնացումը արտահայտվում է լեզվական բոլոր մակարդակներում, քանի որ իր սուբյեկտիվ-գնահատողական վերաբերմունքն արտահայտելու համար խոսողն օգտվում է լեզվական բոլոր մակարդակներում հանդես եկող ուժգնացման միջոցներից:
- Ուժգնացնող բառերի զարգացման հիմքում ընկած են քերականացման ու իմաստային փոխակերպումների գործընթացները, որոնք էլ պայմանավորում են նրանց իմաստային առանձնահատկությունները, կապակցելիության հնարավորություններն ու գործածության հաճախականությունը:
- Ուժգնացնող բառերի առաջացման հիմնական իմաստային աղբյուր-դաշտերի հիման վրա առանձնացվում է ուժգնացնող բառերի 3 հիմնական տեսակ, որոնք առավել հաճախ են հանդես գալիս գնահատողական դատողություններում՝ ծառայելով արտահայտված գնահատողականության ուժգնացմանը:
- Ուժգնացնող բառերի վառ ոճական ու գործաբանական երանգավորումը, ինչպես նաև արտահայտչականությունը կախված են նրանց իմաստային առանձնահատկություններից, լեզվում նրանց քերականացման աստիճանից, ինչպես նաև ասույթում նրանց գրաված դիրքից:
- Գնահատողական դատողություններում ուժգնացնող բառերի ընտրությունը գլխավորապես կախված է խոսողից, նրա հաղորդակցական մտադրությունից և համատեքստից, որում առկայանում են ուժգնացնող բառերի բոլոր իմաստային ու գործառական առանձնահատկությունները:

Հետազոտության հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում՝

1. Attitudinal Evaluations in Newspaper Discourse // AASE-3 Third International Conference “Language, Literature & Art in Cross-cultural Contexts”, Yerevan: YSU Press, 2011, p. 61.
2. Ինտենսիֆիկատորները որպես գնահատողականության աստիճանավորման միջոց // Օտար լեզուները բարձրագույն դպրոցում, N 11, Երևան, ԵՊՀ հրատ., 2010, էջ 156-161:
3. Ուժգնացման կարգի սահմանները լեզվում // Օտար լեզուները բարձրագույն դպրոցում, N 12, Երևան, ԵՊՀ հրատ., 2011, էջ 69-74 (համահեղինակ՝ Ե.Երզնկյան):
4. The Development of Intensifiers in English: Source Domains and Processes of Grammaticalization // Օտար լեզուները բարձրագույն դպրոցում, N 13, Երևան, ԵՊՀ հրատ., 2012, էջ 13-22:
5. Ուժգնացնող բառերը իմաստային փոխակերպումների լույսի ներքո // Օտար լեզուները Հայաստանում, 2013, N 2, Երևան, ԿԱԻ հրատ., էջ 3-20 (համահեղինակ՝ Ե.Երզնկյան):

КАЗАРЯН ЛЕНА ЛЕВОНОВНА

**СЕМАНТИЧЕСКИЕ И ФУНКЦИОНАЛЬНЫЕ ОСОБЕННОСТИ
ЯЗЫКОВЫХ СРЕДСТВ ИНТЕНСИФИКАЦИИ ОЦЕНКИ
В СОВРЕМЕННОМ АНГЛИЙСКОМ ЯЗЫКЕ**

**Диссертация на соискание ученой степени
кандидата филологических наук
по специальности 10.02.07 - “Германские языки”**

**Защита состоится 18 октября 2013 г. в 14:30 на заседании
специализированного совета 009 - “Германские языки” ВАК РА
при Ереванском государственном университете**

РЕЗЮМЕ

Проблема исследования системы средств интенсификации в оценочных конструкциях как когнитивно-лингвистических структур продолжает оставаться в числе важнейших областей исследований в современной лингвистике.

Реферируемая диссертация посвящена исследованию семантических и функциональных особенностей языковых средств интенсификации оценки в современном английском языке. Категория оценочности тесно связана со смежными категориями модальности, эмотивности, экспрессивности и интенсивности. В основе категории интенсивности лежит понятие градации. Эта категория предполагает наличие шкалы интенсивности, по отношению к которой измеряется степень выражения интенсивности языковыми единицами. Отметка на шкале, соответствующая величине интенсивности, может находиться выше или ниже той точки отсчета, которую говорящий эмпирически признает в качестве нормы, т.е. ординарного уровня интенсивности. Интенсификация входит в состав оценочного суждения, представляя собой меру экспрессивности и эмотивности.

Целью настоящей диссертационной работы является изучение семантических и функциональных особенностей интенсификаторов в оценочных суждениях на основе классификации полей-источников их возникновения и развития.

Актуальность исследования определяется его связью с когнитивно-коммуникативной парадигмой лингвистических исследований, необходимостью комплексного подхода к изучению категории интенсивности и функционально-семантического анализа системы средств интенсификации в оценочных конструкциях.

Научная новизна исследования заключается в самой постановке вопроса: изучение интенсификации в контексте оценочного высказывания. Интенсификация оценки, играя важную роль в сфере словесной коммуникации не получила еще должного освещения в свете актуальных положений современной лингвистики. В настоящем исследовании впервые предпринимается попытка выявить систему семантических полей-источников развития интенсификаторов и разработать их типологию на основе особенностей выявленных семантических полей-источников. Разработка типологии интенсификаторов дает возможность системного описания семантических и функциональных проявлений интенсификаторов в оценочных конструкциях. Интенсификаторы как особый лексико-семантический класс слов в английском языке наиболее ярко отражают процессы постепенной десемантизации и грамматикализации, лежащие в основе их возникновения и становления.

Теоретическая значимость работы состоит в разработке новой методологии изучения интенсификаторов в языке в свете когнитивной лингвистики. Результаты исследования позволяют определить эмотивно-оценочные и интенсифицирующие компоненты семантики слова, реализуемые в коммуникативной среде.

Практическая значимость работы заключается в том, что ее результаты могут найти применение в дальнейших исследованиях в области когнитивной и эмотивной лингвистики. Наблюдения и выводы данного исследования могут быть использованы в соответствующих разделах учебников по когнитивной лингвистике, анализу текста и прагматике.

LENA GHAZARYAN

**THE SEMANTIC AND FUNCTIONAL
PECULIARITIES OF INTENSIFICATION OF EVALUATION
IN MODERN ENGLISH**

SUMMARY

Evaluation is closely connected with the adjacent categories of modality, emotiveness, expressiveness and intensification. The category of intensification implies gradability, i.e. the existence of an inherent scale of intensity with regard to which the degree of intensification is measured. Intensification enters evaluative utterances intensifying or deintensifying the felicity of evaluative content and increasing its expressiveness and emotiveness.

The objective of the research is the study of the semantic and functional peculiarities of intensifiers in evaluative utterances based on the semantic source domains of their development. We proceed from the assumption that intensifiers are particularly disposed to renewal which ensures their expressiveness and emotiveness.

The relevance of the research consists in the necessity of the multilateral study of intensifiers and their role and functions in evaluative utterances. The study of the means of intensification in evaluative utterances as cognitive structures continues to be one of the most relevant issues in the present scientific paradigm of linguistic studies.

The novelty of the research is provided by the research question itself: to study intensification in the context of evaluation. Intensification of evaluation plays a vital role in the sphere of verbal communication and has not been thoroughly studied in the light of modern cognitive and pragmatic directions of language study. In the present research for the first time an attempt has been made to develop a comprehensive system of semantic source domains of the development of intensifiers and to elaborate a typology of intensifiers based on the characteristics of the defined source domains. The elaboration of the typology of

intensifiers enables revealing the most relevant semantic and functional peculiarities of intensifiers in language and speech in a more detailed and systematized way. The study shows that intensifiers are particularly disposed to renewal which can be described as a process when items with a definite lexical meaning can gradually develop into adverbial items performing grammatical and pragmatic function of intensification due to the processes of desemantization and grammaticalization.

The theoretical value of the thesis consists in the application of a new methodology for the study of intensifiers in language from a cognitive perspective. From a theoretical point of view the obtained results enable redefining emotive-evaluative and intensifying semantic components of the word meaning realized in speech.

The practical significance of the research is provided by the fact that the findings of the research can be applied in the further studies of the spheres of cognitive and emotive linguistics contributing to the clarification of a number of questions in these fields of study. The obtained results can find an application in the relevant sections of textbooks on cognitive linguistics, text analysis as well as semantics and pragmatics.